ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

12 հոկտեմբերի 2012թ. թիվ 46-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ,,ԴԻԼԻՋԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ'' ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՍԻԼՎԱ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 223-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2012 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ ԴԴ/04/9665-12 գրությունը և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության վարչության պետ Կ. Դովլաթբեկյանի 2012 թվականի հոկտեմբերի 8-ի զեկուցագիրը

Կ ա ր գ ա դ ր ու մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2012 թվականի դեկտեմբերի 14-ի ,,Հայաստանի Հանրապետությունում փայտացման համաճարակաբանական հսկողություն'' ՍԿ թիվ 3.1.1-014-10 սանիտարահամաճարակային կանոնները և նորմերը հաստատելու մասին'' թիվ 33-Ն հրամանի պահանջները չկատարելու պատճառով ,,Դիլիջանի բժշկական կենտրոն'' փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Ս. Պետրոսյանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ նկատողություն:
2. Հանձնարարել ,,Դիլիջանի բժշկական կենտրոն'' փակ բաժնետիրական ընկերության տնօրենին՝ տվյալ խախտումը կատարած, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մարգահովիտ գյուղի բնակիչ Ս.Պոստոլակյանի վիրաբուժական միջամտություն իրականացրած բժիշկ, վիրաբուժական բաժանմունքի վարիչ Ֆ. Սահակյանի նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառել կարգապահական տույժ /ազատել զբաղեցրած պաշտոնից/:
3. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանարապետության Տավուշի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Կ. Դովլաթբեկյանին:

Ա.ՂՈՒԼԱՐՅԱՆ

2012թ. հոկտեմբերի 12
Ք. Իջևան